ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ

31.08.2023թ.

# Բյուրեղավանի Ս. Վարդանյանի

# անվան ավագ դպրոցի

# 2023-2024 ուսումնական տարվա

# դասղեկի աշխատանքային պլան

# 7-րդ «Բ» դասարան

# Դասղեկ՝ Ն.Արզումանյան

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը ) *Դասարանը բաղկացած է տասնինը հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Չկա գերազանց սովորող աշակերտ:Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:*

*2.* Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

*Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին և շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն):*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*3.1* Հոգևոր դաստիարակություն *. Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

**3.2 Գեղագիտական դաստիարակություն.** *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն.** *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայինների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և անձնազոհությունը:*

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն.** *Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*

**3.5 Աշխատանքային դաստիարակություն.** *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը , աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ աշխատասիրությունը կարևոր է կյանքում որևէ արդյունքի հասնելու համար: Միայն աշխատասիրության դեպքում կարող է իր ընտանիքի համար ապահովել բարեկեցիկ կյանք:*

**Բնապահպանական դաստիարակություն.** *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը զլոբալ է:*

**4. Դպրոց-ընտանիք կապը .**

*Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոցը և ընտանիքը, որպեսզի արդյունքը լինի շոշափելի:*

ՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը | սեպտեմբեր 4-8 | աշակերտ դասղեկ |
| II | Զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք | սեպտեմբեր 11-15 | աշակերտ դասղեկ |
| III | Զրույց: Հայրենիքի պաշտպանությունը անձնվիրում է, անկախությունը՝ կարևոր | սեպտեմբեր 18-22 | աշակերտ դասղեկ |
| IV | Զրույց: Կրթությունը կարևոր է, գիտելիքը՝ ուժ | սեպտեմբեր 25-29 | աշակերտ դասղեկ |
| V | Ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ: | հոկտեմբեր 2-6 | աշակերտ դասղեկ |
| VI | Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում: | հոկտեմբեր 9-13 | աշակերտ դասղեկ |
| VII | Զրույց: Իմ իրավունքները և պարտականությունները: | Հոկտեմբեր 16-20 | աշակերտ դասղեկ |
| VIII | Զրույց: Բնության պահպանությունը կարևոր է: Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին: | 30 հոկտեմբեր նոյեմբեր 3 | աշակերտ դասղեկ |
| IX | Քննարկում: Ո՞վ է իսկական ընկերը: | նոյեմբեր 6-10 | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| X | Քննարկում: Իմ կատարած ոչ ճիշտ գործերը: Իմ կատարած լավ գործերը: | նոյեմբեր 13-17 | աշակերտ դասղեկ |
| XI | Զրույց: Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում: | Նոյեմբեր 20-24 | աշակերտ դասղեկ |
| XII | Քննարկում: Ի՞նչն է կյանքում կարևոր: | 27 նոյեմբեր դեկտեմբեր 1 | աշակերտ դասղեկ |
| XIII | Բնական աղետներ: Ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները: | Դեկտեմբեր 4-8 | աշակերտ դասղեկ |
| XIV | <<Ազգ և պետություն>> թեմայով բաց քննարկում և վերլուծություն: | դեկտեմբեր 11-15 | աշակերտ դասղեկ |
| XV | Շարադրություն:<< Իմ ակնկալիքները 2024 թ-ից>> | դեկտեմբեր 18-22 | աշակերտ դասղեկ |
| XVI | Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում: | Հունվար 8-12 | աշակերտ դասղեկ |
| XVII | Զրույց: Նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները: | հունվար 15-19 | աշակերտ դասղեկ |
| XVIII | Զրույց: Եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում: | հունվար 22-26 | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XIX | Զրույց: Իմ կարողություններն ու ձեռքբերումները: | 29 հունվար փետրվար 2 | աշակերտ դասղեկ |
| XX | Ի՞նչ եմ ուզում դառնալ: | փետրվար 5-9 | աշակերտ դասղեկ |
| XXI | Ի՞նչ է պատասխանատվության զգացումը: | փետրվար 12-16 | աշակերտ դասղեկ |
| XXII | Քննարկում: Հայրենիքը սրբություն է, իսկ պաշտպանությունը իմ պարտականությունը: | փետրվար 19-23 | աշակերտ դասղեկ |
| XXIII | Քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները: | 26 Փետրվար Մարտ 1 | աշակերտ դասղեկ |
| XXIV | Շարադրություն. << Մեր տան Աստվածն է մայրս>> | մարտ 4-8 | աշակերտ դասղեկ |
| XXV | Ձևավորել վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները | մարտ 11-15 | աշակերտ դասղեկ |
| XXVI | Ընթերցումներ, քննարկումներ: Ընտանիք, ընտանիքի կարևորությունը մեր կյանքում և պետության կայունության հարցում | մարտ 18-22 | աշակերտ դասղեկ |
| XXVII | Ընթերցումներ, քննարկումներ. ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել: | ապրիլ 1-5 | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XXVIII | Քննարկում: Ի՞նչպիսի քաղաքացի եմ ես: Ի՞նչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի: | ապրիլ 8-12 | աշակերտ դասղեկ |
| XXIX | Քննարկում: Իմ երկիրը երեկ,այսօր,վաղը:<br>Ես եմ իմ երկրի ապագայի կերտողը | ապրիլ 15-19 | աշակերտ դասղեկ |
| XXX | Հիշում ենք և պահանջում:Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ: | ապրիլ 22-26 | աշակերտ դասղեկ |
| XXXI | Աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասացվածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ, մարդկանց նկատմամբ հարգանք, մարդասիրություն: | 29 ապրիլ մայիս 3 | աշակերտ դասղեկ |
| XXXII | Հաղթանակների ամիս մայիս: | մայիս 6-10 | աշակերտ դասղեկ |
| XXXIII | Ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ: | մայիս 13-17 | աշակերտ դասղեկ |
| XXXIV | Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում: | մայիս 20-24 | աշակերտ դասղեկ |

## ...ԱՄԱՐԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|
| Սեպտեմբեր | Անկախության օր | |
| Հոկտեմբեր | Ուսուցչի միջազգային օր | |
| Դեկտեմբեր | Ամանորյա միջոցառում | |
| Հունվար | Հայոց բանակն անպարտելի է | |
| Փետրվար | Զեկույց. <<Սումգայիթի կոտորածի դրդապատճառները>> | |
| Մարտ | Մայրություն | |
| Ապրիլ | Ոչինչ չի մոռացվի, ոչ ոք չի մոռացվի | |
| Մայիս | Արցախը մերն է, Շուշին՝ հայկական | |
| Տարվա ընթացքում | Թեմատիկ էքսկուրսիաներ | |
| Տարվա ընթացքում | Մասնակցություն համադպրոցական միջոցառումներին և շաբաթօրյակներին | |